ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2016 թվականի **թիվ 71** քաղ. Մոսկվա

Տրանսպորտային միջոցների էլեկտրոնային անձնագրերի (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների էլեկտրոնային անձնագրերի) եւ ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի գործելու կարգում փոփոխություններ կատարելու մասին

«Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) եւ ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձեւերի ներդրման եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի առաջին պարբերությանը համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 122 որոշմամբ հաստատված՝ Տրանսպորտային միջոցների էլեկտրոնային անձնագրերի (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների

էլեկտրոնային անձնագրերի) եւ ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի գործելու կարգում կատարել փոփոխություններ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 14-ի
թիվ 71 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրանսպորտային միջոցների էլեկտրոնային անձնագրերի (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների էլեկտրոնային անձնագրերի) եւ ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի գործելու կարգում կատարվող

1. Նշված կարգի թիվ 1 հավելվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 15-րդ կետով՝

«15. Տարածք, որտեղ թույլատրվում է տրանսպորտային միջոցի գրանցումը:»:

2. Նշված կարգի թիվ 3 հավելվածի 10-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12-րդ ենթակետով՝

«12) տարածք, որտեղ թույլատրվում է տրանսպորտային միջոցի գրանցումը:»:

3. Նշված կարգի 7-րդ հավելվածի 11-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12-րդ ենթակետով՝

«12) «տարածք, որտեղ թույլատրվում է տրանսպորտային միջոցի գրանցումը» դաշտում՝ «Եվրասիական տնտեսական միություն» գրառում (եթե արտադրված տրանսպորտային միջոցը համապատասխանում է այն պահանջներին, որոնք սահմանվում են Միության մարմինների որոշումներով եւ

ներկայացվում այդպիսի տրանսպորտային միջոցների արտադրության ժամանակ դրանց ազատ շրջանառության համար) կամ «սահմանափակ տարածք» գրառում (եթե արտադրված տրանսպորտային միջոցը չի համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանվում են Միության մարմինների որոշումներով եւ ներկայացվում այդպիսի տրանսպորտային միջոցների արտադրության ժամանակ դրանց ազատ շրջանառության համար):

Տվյալ դաշտը լրացվում է այն դեպքում, երբ «արտոնյալ ռեժիմի կիրառմամբ տրանսպորտային միջոցի արտադրության մասին տեղեկություններ» դաշտում կատարվել է «տրանսպորտային միջոցի մոդելն արտադրված է արտոնյալ ռեժիմի կիրառմամբ» գրառումը:

Տվյալ դաշտը կիրառվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան այն դեպքում, երբ կատարվել է «սահմանափակ տարածք» գրառումը, եւ այն անդամ պետության օրենսդրությունում, որտեղ նախատեսվում է գրանցել տրանսպորտային միջոցը, Միության մարմինների որոշումների կատարման նպատակով սահմանված են տրանսպորտային միջոցների գրանցման նկատմամբ գործող սահմանափակումներ:»: